ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔ-ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառավարման ոլորտի վրա իրվական ակտի նախագծի ազդեցության վերաբերյալ

«Հայաստանի համայնքների միության» Հանրապետական խորհրդի 2020թ. հունվարի 11-ի նիստում

Իրավական ակտի նախագծի անունը

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով նախատեսվում է գործող օրենքի 89-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասից կարող են ֆինանսավորվել համայնքի կողմից համաֆինանսավորմամբ իրականացվող կապիտալ ծրագրերը և (կամ) կապիտալ ակտիվի ձեռքբերումը, եթե դրա արդյունքում ձևավորվող, փոփոխության ենթարկվող և ձեռք բերվող կապիտալ ակտիվները սեփականության իրավունքով կհաշվառվեն համայնքի հաշվեկշռում:»: Ըստ էության, այդ նախագծով օրենսդրորեն հնարավորություն կստեղծվի համայնքի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորել համայնքի կողմից համաֆինանսավորմամբ իրականացվող կապիտալ ծրագրերը և (կամ) կապիտալ ակտիվի ձեռքբերումը, պայմանով՝ որ այն սեփականության իրավունքով գրացվի

համայնքի անունով: Կարծում ենք, որ նման կարգավորման ընդունումը դրական արդյունքների կհանգեցնի համայնքների տնտեսական և ենթակառուցվածքային զարգացման գործում:

ՏԻՄ օրենքի նախագիծը լրացուցիչ իրավական հնարավորություններ է ստեղծում համայնքի կողմից կապիտալ ներդրումային ծրագրերի իրագործելու տեսանկյունից:

Հիմնական եզրակացություն

ՏԻՄ օրենքի նախագիծը լրացուցիչ իրավական հնարավորություններ է ստեղծում համայնքի կողմից կապիտալ ներդրումային ծրագրերի իրագործելու տեսանկյունից, կունենա դրական ազդեցություն տեղական ինքնակառավարման ոլորտի վրա:

Միաժամանակ, նախագիծն ամբողջությամբ չի կարգավորում իրավակիրառ պրակտիկայում հանդիպող առանձին դեպքերը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի համայնքների միությունն այն կարծիքի է, որ օրենսդրությունտց պետք է հանել համայնքի վարչական-ֆոնդային բյուջեների սահմանափակումները: